Պարույր Սևակ

Ութնյակներ

Մաս 6

51

Նույն հին վանքն է,
Բայց այլևս սուրբ չի թվում այս վանքը:
Նույն լեզվակն է,
Բայց մի տեսակ կեղծ է հնչում այս զանգը:
Հանգը տեղը, վանկը տեղը՝
Ոտանավոր է կարծես,
Նույնիսկ վաղուց անգիր գիտես,
Բայց... կորել է հուզանքը:

52

Հիմար ժպիտով
Ծածկում եմ վերքըս -
Ներսից սև՛-սև՛ է,
Դրսից է ներկըս...
Ինքս ո՞նց դառնամ
Հեքիաթի տղան
Եվ ինձ ո՞նց ասեմ.
-Արքա՛, դու մե՛րկ ես...

53

Եթե ասեմ՝
Բոց կլինի,
Եթե չասեմ՝
Խոց կլինի...
Ինքդ ասա.
Ես ի՞նչ անեմ,
Բա իմ բանը
Ո՞նց կլինի:

54

Տանը լինեմ, լինեմ մայթում՝
Քո ծիծաղն է դեմքիս ցայտում,
Քո ժպիտն է ամեն կողմից
Արևի պես ճառագայթում:
Ազատ զգամ, զգամ գերված,-
Միևնույնն է, սիրտըս իրեն
Միշտ զգում է ինչ-որ անտես
Որոգայթո՛ւմ, որոգայթո՛ւմ:

55

Իմ սրտի սյունը
Տեղից խախտել են...
Իմ տան սրբերը
Ո՞ւր են - գաղթել են...
Փառք ու հաղթանակ
Իզո՛ւր մաղթեցին,-
Չգիտեմ՝ ովքեր,
Բայց ինձ հաղթել են...

56

Ես բռնել ուզեցի,
Եվ դու պուկ տվեցիր,
Ես արև ուզեցի,
Եվ դու շուք տվեցիր:
Իսկ հենց որ՝ դառնացած՝
Ուզեցի արտասուք.
Արցունքը շատ էր քի՞չ,
Որ և սուգ տվեցիր:

57

Մաղի մեջ
Ջո՞ւր կմնա,
Պաղի մեջ
Հո՞ւր կմնա,
Այրում են
Թե անկրակ,
Էլ մոխիր,
Մո՞ւր կմնա:

58

Թե ինձ համար ինչ է պահված՝
Ինքս էլ կարգին չգիտեմ...
Հազար գետից թռել-անցել,
Կանգ եմ առել մեկի դեմ,
Կանգ եմ առել, չեմ հասկանում.
Թրջվելո՞ւց եմ սարսափում,
Թե՞ ինձ ոչինչ չի գրավում
Ու չի ձգում այն ափում:

59

Հովիտը ինքս տվեցի,
Խլեցիր և սարավանդը.
Քեզ քիչ էր այս այրող սերը,
Վառեցիր և կիզող խանդը:
Ուզեցի, որ հավետ կապվենք,
Որ սիրով խայտանք ու ծփանք,
Դու կապը դարձըրիր կապանք
Եվ տուն կոչեցիր... այս բանտը:

60

Դո՛ւ ես ձգում,
Այնինչ ես եմ կտրրվում.
Դո՛ւ բռնվում,
Այնինչ ես եմ փետրրվում:
Ի՞նչ էլ անեմ,ի՞նչ էլ չանեմ,
Ա՛յ քեզ բան,
Կուժն ու կուլան
Իմ գլխին են կոտրրվում: